ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Ու վեր կացա ես, որ մեր հայրենի օրենքովը հին՝
Վերջին հանգիստը կարդամ իմ ազգի անբախտ զոհերին,
Որ շեն ու քաղաք, որ սար ու հովիտ, ծովից մինչև ծով
Մարած են, մեռած, փլռված ու ցրրված հազար հազարով...

Ու կրրակ առա հայոց հրդեհի կարմիր բոցերից,
Էն խաղաղ ու պաղ երկնքի ծոցում վառեցի նորից
Մասիսն ու Արան, Սիփանն ու Սրրմանց, Նեմրութ, Թանդուրեք,
Հայոց աշխարհքի մեծ կերոնները վառեցի մեկ-մեկ,
Սուրբ Արագածի կանթեղն էլ, ինչպես հեռավոր արև,
Անհաս, աննրվազ, միշտ վառ ու պայծառ, իմ գրլխի վերև...

Կանգնեցի խոժոռ, մենակ ու հաստատ, Մասիսի նրման,
Կանչեցի թրշվառ էն հոգիներին՝ ցրրված հավիտյան
Մինչև Միջագետք, մինչև Ասորիք, մինչև Ծովն հայոց,
Մինչև Հելլեսպոնտ, մինչև Պոնտոսի ափերն ալեկոծ:
– Հանգե՛ք, իմ որբե՛ր... իզո՛ւր են հուզմունք, իզո՛ւր և անշահ...
Մարդակեր գազան՝ մարդը՝ դեռ երկար էսպես կրմնա...

Աջիցրս Եփրատ, ձախիցրս Տիգրիս՝ ահեղ ձեներով,
Սաղմոս կարդալով՝ անցան, գրնացին խոր-խոր ձորերով,
Ամպերն էլ ելան Ջիրավի ձորից, հրսկա բուրվառից,
Ճանապարհ ընկան Ծաղկանց սարերից, Հայկական պարից,

Բույլ-բույլ, բուրավետ, շարժվեցին դեպի կողմերը
հեռու,
Գոհար ցողելու, ծաղկունք բուրելու, բուրմունք
խընկելու
Մինչև Միջագետք, մինչև Ասորիք, մինչև Ծովն հայոց,
Մինչև Հելլեսպոնտ, մինչև Պոնտոսի ափերն ալեկոծ...
25 – Հանգե՛ք, իմ որբեր... իզո՛ւր են հուզմունք, իզո՛ւր և
անշահ...
Մարդակեր գազան՝ մարդը՝ դեռ երկար էսպես կըմնա...